ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան, Սասնա Ծռեր 2, տարածք 251

հեռ. (+374 11) 700 100, էլ. փոստ՝ info@globalcredit.am

Ինտերնետային կայք՝ www.globalcredit.am

Հաշվետվություն թիվ 8, 16.12.2019

Համաձայն «ԱԶԴԱԳԻՐ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/04-ի գլուխ 23-ի, կից ներկայացնում է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ Գլխավոր տնօրենի 2019թ. դեկտեմբերի 06-ի թիվ ՑՊ-062-12/19 և ՑՊ-063-12/19 որոշումները՝ «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի պարտատոմսերի ցուցակման վերաբերյալ:

Կից որոշումները՝ 02 (երկու) թերթ

AMX Armenia Securities Exchange

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

06 դեկտեմբերի 2019 թվականի N ՑՊ-062-12/19

ք. Երևան

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ (Bbond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Թողարկող) 2019 թվականի դեկտեմբերի 02-ի հայտը 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 24 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 6.5% արժեկտրոնային տոկոսադրույքով 10,000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 05-ի եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 12-րդ գլխի 55 կետով և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի զ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 24 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 6.5% արժեկտրոնային տոկոսադրույքով 10,000 հատ պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից շնորհվել է AMGLBLB28ER0 ծածկագիրը, ցուցակել և ընդգրկել պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում, շնորհել GLBLB8 հապավումը, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական և ռեպո գործարքների կնքումը:
2. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:
3. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի դեկտեմբերի 11-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**

AMX Armenia Securities Exchange

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

06 դեկտեմբերի 2019 թվականի N ՑՊ-063-12/19

ք. Երևան

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՆ ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱԶԱՏ (Cbond) ՇՈՒԿԱՅՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Թողարկող) 2019 թվականի դեկտեմբերի 02-ի հայտը 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 12 ամիս շրջանառության ժամկետով, 9% արժեկտրոնային տոկոսադրույքով, 50,000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերն առևտրին թույլատրելու և պարտատոմսերի ազատ (Cbond) շուկայում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 05-ի եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 23-րդ գլխով և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի զ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 12 ամիս շրջանառության ժամկետով, 9% արժեկտրոնային տոկոսադրույքով, 50,000 հատ պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից շնորհվել է AMGLBLB19ER9 ծածկագիրը, թույլատրել առևտրին և ընդգրկել պարտատոմսերի ազատ (Cbond) շուկայում, շնորհել GLBLB9 հապավումը, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական և ռեպո գործարքների կնքումը:
2. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:
3. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի դեկտեմբերի 11-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՓԲԸ
YEREVAN "ARMENIA SECURITIES EXCHANGE" OPEN JOINT STOCK COMPANY
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ
02220914